Դատավորական եկամուտներ

Գեւորգ Հայրապետյան

2009թ.-ի հոկտեմբերին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից ստացավ ՀՀ Վճռաբեկ, Քաղաքացիական եւ Քրեական Վերաքննիչ, ինչպես նաեւ ՀՀ Վարչական դատարանների նախագահների եւ բոլոր դատավորների 2008թ.-ի գույքի եւ եկամուտների հայտարարագրերում ներառված տվյալների մասին տեղեկանքները: ԻԱԿ-ի այս նախաձեռնությունը հնարավորություն տվեց պարզել, թե որքանով են ֆինանսապես անկախ եւ կայուն արդարադատություն իրականացնողները:

Նշենք, որ որոշ դատավորներ 2008թ.-ին զբաղեցրել են այլ պաշտոններ ուստի գույքի եւ եկամուտների հայտարարագրեր ներկայացրել են 2008թ.-ին իրենց զբաղեցրած պաշտոններում պաշտոնավարելու ժամանակ ստացած եկամուտների վերաբերյալ:

2008թ.-ի ընթացքում ՀՀ Վճռաբեկ, Վերաքննիչ քրեական, Վերաքննիչ քաղաքացիական եւ Վարչական դատարանների 69 դատավորներից միայն 13-ն են օտարել կամ ձեռք բերել որեւէ շարժական կամ անշարժ գույք: Այսպես, ՀՀ Վճռաբեկ դատարանի դատավոր Դավիթ Ավետիսյանը եւ ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Սեւակ Համբարձումյանը օտարել են մեկական Վազ 2106 մակնիշի ավտոմեքենա, փոխարենը ոչինչ ձեռք չեն բերել: Եւս մեկ Վազ 2106 մակնիշի ավտոմեքենա է օտարել ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Ստեփան Միքայելյանը՝ փոխարենը ձեռք բերելով ԿԻԱ sportage մակնիշի ավտոմեքենա:

ՀՀ Վճռաբեկ դատարանի դատավոր Վարդան Ավանեսյանը եւ ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Կարինե Հակոբյանը 2008թ.-ի ընթացքում ոչ մի անշարժ կամ շարժական գույք չեն օտարել, բայց ձեռք են բերել համապատասխանաբար Մերսեդես A 190 եւ Մերսեդես Բենց ML 320 մակնիշի ավտոմեքենաներ: Ոչինչ չօտարելով՝ տրանսպորտային միջոցներ են ձեռք բերել նաեւ ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ Տարոն Նազարյանը՝ Մերսեդես Բենց ML 350, եւ Արսեն Մկրտչյանը՝ Ինֆինիտի QX 4: Մեկական շենք եւ շինություն են ձեռք բերել ՀՀ Վարչական դատարանի դատավորներ Կարինե Բաղդասարյանը եւ Կարեն Մաթեւոսյանը: ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Տիգրան Սահակյանը 2008թ.-ի ընթացքում օտարել է Լեքսուս LS 470 մակնիշի ավտոմեքենա՝ ձեռք բերելով շենք եւ շինություն, ինչպես նաեւ Ռենջ-Ռովեր մակնիշի ավտոմեքենա: Վարչական դատարանի դատավորներ Աշոտ Աբովյանը ձեռք է բերել Աուդի A6 2.8 մակնիշի ավտոմեքենա, օտարել է 2 շենք եւ շինություն, Արծրուն Միրզոյանը ձեռք է բերել Տոյոտա Լեքսուս 330 մակնիշի

ավտոմեքենա, օտարել է Մերսեդես Բենց C 200 մակնիշի ավտոմեքենա, եւ Արթուր Պողոսյանը ձեռք է բերել Ժիգուլի Վազ 2115 մակնիշի ավտոմեքենա եւ օտարել է նույն՝ Ժիգուլի Վազ 2115 մակնիշի ավտոմեքենա:

2008թ.-ին գույքով եկամուտ ունեցել է միայն ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Սերգեյ Չիչոյանը՝ 7.300.000 ՀՀ դրամ արժողությամբ:

2008թ.-ի ընթացքում 69 դատավորներից միայն 12-ն են ստացել արտարժույթով եկամուտ: Արտարժույթով ամենաշատ եկամուտը ստացել են ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ Տարոն Նազարյանը՝ 219.465 ԱՄՆ դոլար, եւ Տիգրան Սահակյանը՝ 53.729 ԱՄՆ դոլար: Արտարժույթով նվազագույն եկամուտը ստացել են ՀՀ Վճռաբեկ դատարանի դատավորներ Արթուր Պողոսյանը եւ Մամիկոն Դրմեյանը՝ 700 ական Եվրո:

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Արման Մկրտումյանը արտարժույթով ստացել է 1208 Եվրո եկամուտ, ՀՀ Վճռաբեկ դատարանի դատավորներ Համլետ Ասատրյանը՝ 1500 ԱՄՆ դոլար, Ելիզավետա Դանիելյանը՝ 3000 ԱՄՆ դոլար, Էրնա Հայրիյանը՝ 1800 ԱՄՆ դոլար, ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահ Անատոլի Մաթեւոսյանը՝ 8000 ԱՄՆ դոլար, Ստեփան Միքայելյանը՝ 1080 Եվրո, ՀՀ Վարչական դատարանի դատավորներ Ռուզաննա Հակոբյանը՝ 3000 ԱՄՆ դոլար եւ Արթուր Առաքելյանը՝ 6000 ԱՄՆ դոլար եկամուտ:

2008թ.-ին ՀՀ դրամով եւ գույքով ամենաշատ եկամուտն ունեցել է ՀՀ Վարչական դատարանի դատավոր Կարեն Մաթեւոսյանը 67.818.687 դրամ: Նրա եկամուտն ավելի քան 27 անգամ գերազանցում է 2008թ.-ին ամենաքիչ եկամուտ ստացած՝ ՀՀ Վարչական դատարանի դատավոր Արթուր Ծատուրյանի եկամուտին (2.500.000 դրամ) եւ մոտ 9 մլն դրամով ավելի եկամուտների ծավալով երկրորդ տեղում գտնվող՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Արման Մկրտումյանի ցուցանիշից (58.922.199 դրամ): ՀՀ Վարչական դատարանի դատավոր Կարեն Մաթեւոսյանին հաջորդում է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Արման Մկրտումյանը՝ 58.922.199 դրամ, եւ ՀՀ Վարչական դատարանի դատավոր Ռոբերտ Սարգսյանը՝ 19.920.103 դրամ եկամուտներով:

2008թ.-ին ամենաքիչ եկամուտն ունեցել են ՀՀ Վարչական դատարանի դատավորները: Ինչպես նշվեց, 2008թ.-ին ամենաքիչ եկամուտը ստացել է ՀՀ Վարչական դատարանի դատավոր Արթուր Ծատուրյանը՝ 2.500.000 դրամ: Նրան հաջորդում են նույն դատարանի դատավորներ Արծրուն Միրզոյանը եւ Քրիստինե Մկոյանը՝ համապատասխանաբար 2.511.936 դրամ եւ 2.540.578 դրամ եկամուտներով:

Մնացած բոլոր դատավորների՝ 2008թ.-ին ստացած եկամուտի չափը տատանվում է

2.6-19.9մլն դրամի սահմաններում: Անճշտությունից խուսափելու համար այստեղ հաշվի չեն առնված ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ Տարոն Նազարյանի եւ Տիգրան Սահակյանի եկամուտները, քանի որ նրանց եկամուտները բաղկացած են նաեւ արտարժույթով ստացված միջոցներից: ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Տարոն Նազարյանի եկամուտը կազմել է 3.747.03 դրամ եւ 219.465 ԱՄՆ դոլար, իսկ Տիգրան Սահակյանի եկամուտը կազմել է 10.200.126 դրամ եւ 53.729 ԱՄՆ դոլար:

ՀՀ Վճռաբեկ, Քաղաքացիական եւ Քրեական Վերաքննիչ, ինչպես նաեւ ՀՀ Վարչական դատարանների նախագահները եւ բոլոր դատավորները միասին 2008թ.-ի ընթացքում ունեցել են 498.247.356 դրամ (որից 7.300.000 դրամ գույքով), 296494 ԱՄՆ դոլար եւ 3688 Եվրո եկամուտ:

Հ/Հ	Դատավորը	Եկամուտը	Օտարել է	Ձեռք է բերել
1.	Արման Մկրտումյան (Վճռաբեկ դատարանի նախագահ)	58.922.199/1208 Եվրո		
2.	Դավիթ Ավետիսյան (Վճռաբեկ դատարան)	8.832.110	Վազ 2106	
3.	Հովհաննես Ղուկասյան (Վճռաբեկ դատարան)	6.954.086		
4.	Սամվել Օհանյան (Վճռաբեկ դատարան)	4.773.439		
5.	Համլետ Ասատրյան (Վճռաբեկ դատարան)	4.446.211/1500 ԱՄՆ դոլար		
6.	Արթուր Պողոսյան (Վճռաբեկ դատարան)	3.707.463/700 Եվրո		
7.	Ելիզավետա Դանիելյան (Վճռաբեկ դատարան)	7.410.163/3000 ԱՄՆ դոլար		
8.	Սլավա Սարգսյան	6.821.827		

	(Վճռաբեկ դատարան)			
9.	Վարուժան Աբելյան (Վճռաբեկ դատարան)	5.913.417		
10.	Երվանդ Խունդկարյան (Վճռաբեկ դատարան)	3.638.473		
11.	Էրնա Հայրիյան (Վճռաբեկ դատարան)	10.436.123/1800 ԱՄՆ դոլար		
12.	Ելենա Սողոմոնյան (Վճռաբեկ դատարան)	4.304.262		
13.	Սուրեն Անտոնյան (Վճռաբեկ դատարան)	6.237.778		
14.	Տիգրան Պետրոսյան (Վճռաբեկ դատարան)	4.385.509		
15.	Արտակ Բարսեղյան (Վճռաբեկ դատարան)	3.601.801		